

ուղղել զխափանեալ օրէնսն եւ զարարողութիւնս ժամատեղաց եւ պատարագացն եւ զհացկերութի սեղանացն եւ զզպրատանցն : Եւ զնացեալ ի Սաղմոսավանսն եւ Յոհաննավանսն , որ հրաշալիք եւ հռչակաւորք են ի մէջ ամենայն վանորէիցն , զնոսա կամեցաւ զպրատունս առնել եւ կարգեալ մանկունս ուշիմս ի զպրոց , որպէս յետոյ կատարեաց իսկ արդեամբք . զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար Աստուծոյ աջողելովն» :

Էջմիածնի նորոգութեան համբաւը «հրաշակեալ ծաւալեցաւ ընդ ամենայն աշխարհ» կը գրէ Դաւրիթեցի (307) եւ յառաջ բերաւ անհուն ցնծութիւն . «ամենեքեան զուարճացեալք ցնծային» : Այս պատճառաւ ալ ամէն կողմէն կը հասնէին առատ նպաստներ , ոչ միայն Մայր Տաճարի նորոգութիւնը աւարտելու , այլ եւ փարթամացնելու Տաճարը՝ եկեղեցական անօթներով եւ «մարմնական ստացուածքներով» (Դաւր . 312) :

Ժամանակակից մը՝ Մկրտիչ Զուղայեցի խանդավառ զգացումներով երգած է էջմիածնի վերանորոգութիւնը հետեւեալ տողերու մէջ (Զեռ . էջմ . 1171 , թղ . 236 ր) .

«Ի թիւ հայկազնի հազար եօթանասնի
 եւ եօթն հետ կարգի ,
 Ի ձեռն արկանի զչինումն տաճարի
 սուրբ էջմիածնի .

Ոչ սկիզբն նախկի կամ հիմն արկանի
 կամ նոր սկսանի ,